ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ - 2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Տևողությունը՝ 90 րոպե

1. Ավետիք Իսահակյանն իր Աբու-Լալա Մահարի պոեմի գլուխներն ի՞նչ է անվանել.

1. մասեր
2. սուրահներ
3. բաժիններ
4. գրքեր

2. Ո՞ր ստեղծագործության ո՞ր հերոսի խոսքերն են. ***«Մարդը կերթա, աշխարքը կմնա»:***

1. «Հին աստվածներ», Ճերմակավորի
2. «Անուշ», Սարոյի մոր
3. «Համբերանքի չիբուխը», Օհան ամու
4. «Ճիտին պարտքը», Հուսեփ աղայի

3. Ո՞վ է ասել և ո՞ւմ մասին. ***«… առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այդպիսի պայծառ և անմիջական տաղանդ այժմ չկա ամբողջ Եվրոպայում»:***

1. Եղիշե Չարենցը՝ Վարուժանի:
2. Ալեքսանդր Բլոկը՝ Իսահակյանի:
3. Լևոն Շանթը՝ Վարուժանի:
4. Պարույր Սևակը՝ Մեծարենցի:

4. Ո՞ր գրողի հիշողություններից է հատվածը. ***«Դասագիրք չունեինք. դասագրքի փոխարեն Շողո բաջին յուրաքանչյուրիս ձեռքը տվել էր թիակաձև մի-մի փոքրիկ փայտե տախտակ. այդ տախտակները նա ստանում էր հյուսնից՝ իր պատվերով շինված: Շողո բաջին տախտակների վրա փակցրել էր սպիտակ թղթեր, որոնց վրա իր ձեռքով գրել էր հայկական տառերը»:***

1. Վահան Տերյան
2. Հովհաննես Թումանյան
3. Ակսել Բակունց
4. Ավետիք Իսահակյան

5. Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայում հերոսներից ո՞վ է ասել այս խոսքերը և ո՞ւմ. ***«Մենք այդ եկեղեցին չենք շինած քու բարձրյալ Աստծուդ համար, ինչպես որ միշտ կրկներ ես, մի՛ խաբեր քեզի. այդ եկեղեցին շիներ ենք մեզի համար, մեր սիրո Աստծուն համար»:***

1. Աբեղան՝ Սեդային:
2. Վանահայրը՝ Մարիամ իշխանուհուն:
3. Մարիամ իշանուհին՝ Աբեղային:
4. Մարիամ իշխանուհին՝ Վանահորը:

6. Նշված բանաստեղծական տողը ո՞ր գրողի ո՞ր ստեղծագործությունից է.
«Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք դյութական»:

1. Իսահակյան, «Օտա՛ր, ամայի՛ ճամփեքի վրա»
2. Իսահակյան, «Աբու-Լալա Մահարի»
3. Վարուժան, «Ցորյանի ծովեր»
4. Տերյան, «Գարուն»

7. Ո՞վ և ո՞ւմ է բնութագրել բանաստեղծական այս տողերով.
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև՛ է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին:

1. Չարենցը՝ Մեծարենցին:
2. Իսահակյանը՝ Տերյանին:
3. Շանթը՝ Վարուժանին:
4. Իսահակյանը՝ Վահան Տերյանին:

8. Ո՞ր տողը չի վերաբերում Մեծարենցի քնարերգությանը:.

1. Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի…
2. Դարձուձե՛ք նավակներս դյութավար, իրիկվա՛ն հովիկներ…
3. Հովե՛ր կանցնին.- / Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կարթընանա…
4. … Հիվա՛նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛ …

9. Բերված տողերը արձանագրված են հայ բանաստեղծներից մեկին նվիրված հուշատախտակի վրա: Որտե՞ղ է գտնվում այդ հուշատախտակը, և ո՞ւմ են նվիրված այդ տողերը.

Ի՞նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կապրի,
Երբոր երազն անմա՛հ է:

1. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Ավետիք Իսահակյանին:
2. Բելգիայի Գենտ քաղաքում, Միսաք Մեծարենցին:
3. Բելգիայի Գենտ քաղաքում, Դանիել Վարուժանին:
4. Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում,Դանիել Վարուժանին:

10.Վահան Տերյանի ո՞ր ստեղծագործության տողերն են ներկայացված.

Վտարանդի երկրում աղոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

1. «Դու հպարտ չես, իմ հայրենիք…»
2. «Չեմ դավաճանի իմ Նվարդին…»
3. «Կարծես թե դարձել եմ ես տուն»
4. «Մի՞թե վերջին պոետն եմ ես…»

11.Ո՞ւմ են ուղղված Եղիշե Չարենցի տողերը.

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մո՛տ ես,
Մորմոքող հրի՛պես մեր հիվանդ արյան,
Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ՜, հեռու ընկեր իմ, օ՜……:

1. Դանիել Վարուժան
2. Վահան Տերյան
3. Ավետիք Իսահակյան
4. Հովհաննես Թումանյան

12. Հայ արձակագիրներից ո՞վ և Վահան Տերյանի ո՞ր ժողովածուի մասին է իր հուշերում գրել հետևյալ խոսքերը. ***«Մեր գրականության պատմությունը չի տեսել, երևի, բանաստեղծական այնպիսի սրտագին ընդունելություն, որին արժանացավ Տերյանի «……» ժողովածուն»:***

1. Ակսել Բակունց, «Երկիր Նաիրի»
2. Ստեփան Զորյան, «Մթնշաղի անուրջներ»
3. Ակսել Բակունց, «Մթնշաղի անուրջներ»
4. Դերենիկ Դեմիրճյան, «Երկիր Նաիրի»

13. Ընտրի՛ր Վահան Տերյանի «Հրաժեշտի գազել» ստեղծագործության տրված տողի շարունակությունը. ***«Ոսկեշողթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,…»:***

1. Մանուկներին վառ-խլրտուն, ասում եմ ես՝ մնաք բարով:
2. Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես՝ մնաս բարով:
3. Արտույտներին ոսկի արտում, ասում եմ ես՝ մնաք բարով:
4. Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

14. Ըստ քեզ՝ ինչո՞ւ է Իսահակյանի հայտնի պոեմի հերոսը՝ Աբու- Լալա Մահարին, հեռանում Բաղդադից.

1. Ուզում է ավելի բարեկեցիկ ու հարուստ կյանքով ապրել:
2. Ուզում է ձուլվել բնությանը, որն անսահման ազատության ու արդարության խորհրդանիշն է:
3. Գնում է դեպի արևը՝ բնակության համար ավելի տաք տեղ գտնելու նպատակով:
4. Շատ է հավանում իր քաղաքի բարքերն ու մարդկանց, բայց ուզում է ճամփորդել ու ճանաչել ուրիշ ազգերն ու նրանց սովորույթները:

15. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է Մեծարենցն իր բանաստեղծությունը վերնագրել «Տո՛ւր ինձի, Տե՛ր...».

1. Խնդրում է, որ Աստված բարեգութ գտնվի և մի քանի տարվա կյանք էլ պարգևի իրեն:
2. Տիրոջից խնդրում է անանձնական ուրախություն:
3. Խնդրում է Աստծուց, որ ուժ տա՝ դիմակայելու կյանքի դաժան փորձությանը:
4. Աստծուց պահանջում է մեծ սեր և անձնական երջանկություն:

16. Ընտրի՛ր Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակի հերոսների անունները, թվերը նշի՛ր հերթականությամբ:

1. Վասիլիկ, 2. Միքայել Մարգարյան, 3. Մոսի, 4. Հուսեփ աղա, 5. Սարո,
6. Զարդար 7.Սեդա, 9. Ռուբեն Թուսյան:

17. Գտի՛ր Վահան Տերյանի ստեղծագործությունների վերնագրերը, թվերը նշի՛ր հերթականությամբ.

1. «Մեր պատմիչները և մեր գուսանները», 2. «Դանթեական առասպել», 3.«Աշնան մեղեդի», 4. «Առաջին ծիլեր», 5. «Ձմրան պարզ գիշեր», 6. «Ալագյազի մանիներ», 7. «Մթնշաղ», 8. «Դանթեական առասպել», 9. «Տխրություն»:

18. Ընտրի՛ր և ըստ հաջորդականության նշի՛ր Վահան Տերյանի «Fatum» բանաստեղծության տողերը:

1. Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում...,
2. Իմ հոգու համար չըկա արշալույս...,
3. Մի նոր հուզում է սիրտս մրրկում...,
4. Կարոտավառ երազում ենք միշտ իրար...,
5. Ես ու դու էլ շղթայված ենք իրարու...,
6. Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել...,
7. Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու...:

19. Մեծարենցի «Սիրերգ» բանաստեղծության տողերում բաց է թողնված 5 բառ: Գտի՛ր տրված 3 բառերի տեղը, այնուհետև հերթականությամբ նշի՛ր թվերը:

Շրթունքս են ծարավ ..... համբույրին,
..... գիշերն է ..... ու .....,
Բայց ..... իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՛...

1. լույսն, 2. լուսին, 3. լույս

20. Գտի՛ր, թե Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայից բերված խոսքերից որը որ հերոսինն է: Համապատասխանեցրո՛ւ, այնուհետև հերթականությամբ նշի՛ր թվերը:

ա) «Ափսոս, վանահա՛յր, քու սիրտդ երբեմն թևեր ուներ»: (.....)

բ) «...Այս ժայռի կտորին վրա ես իմ վանքս հիմնեցի. ասկե ետքը հոս անապատ պիտի կոչվի»: (.....)

գ) «Ոչ, կըսեմ քեզի, չմարեցան այդ կայծերը: Աշխատեցար, որ մարես, աշխատեցար, որ խաբես քեզի..., բայց չմարեցիր, չէիր կրնար»: (.....)

1. Վանահայր, 2. Իշխանուհի, 3. Աբեղա

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան